Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Նավագնացության մասին» Համաձայնագրի (այսուհետ Համաձայնագիր) նախագիծը մշակվել է համաձայնեցված (համակարգված) տրանսպորտային քաղաքականության արձանագրության հիման վրա (Եվրասիական տնտեսական միության պայմանագրի 2014 թվականի մայիսի 29 N24 հավելվածի):

Համաձայնագիրը սահմանում է անդամ-պետությունների ներքին ջրային ուղիներում նավերի նավարկության կարգը:

Համաձայնագիրը թույլ է տալիս անդամ-պետության և այլ անդամ-պետության միջև ներքին ջրային ուղիներով անդամ-պետությունների դրոշի ներքո նավարկող նավերով իրականացնելու երկկողմ և տարանցիկ բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրում, ինչպես նաև նավի քարշակում: Անդամ-պետությունը տալիս է մեկ այլ անդամ-պետության դրոշի ներքո նավարկող նավին նույն իրավունքը ինչ-որ իր դրոշի ներքո նավարկող նավին:

Անդամ-պետությունները ապահովում են իրենց ներքին օրենսդրությամբ նախատեսված միևնույն կարգավորումները այլ անդամ-պետության նավերի համար:

Համաձայնագիրը սահմանում է անդամ-պետությունների ներքին ջրային ուղիներում նավարկության իրականացման մեխանիզմները:

Ելնելով վերոգրյալ սկզբունքներից և հաշվի առնելով համաձայնագրի հոդվածներում արծարծված խնդիրների արդիականությունը Հայաստանի Հանրապետության համար՝ «Նավագնացության մասին» Համաձայնագրի կնքումը գտնում ենք նպատակահարմար:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ **Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**